

ՄԵԼԻ

Տարեկան դիմել 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբարաբար զինում են ուղղակի
Туфласъ. Редакція «Мелі»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաւրանիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻՎԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ալեքսանդրիայի ուրախ-ծովեր: Թիւրքիա: Նամակ Գերմանիայից: Նա-մակ Թիւրքիայից: Արտաքին լուրեր:—ԽԱՌՆԼՈՐԵՐ:—ՀԵՌԱՎԻՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ՅԵԼԻԵՏՈՒՆ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՐԵՐ

Մեզ անդադար սխալմամբ հեռագրիներ են բե-րում, որոնք ուղղված են լինում աղիօկատ Սե-նեքերին Արծրունուն: Սխալը նրանից է պատա-հում, որ հեռագրիներ ուղարկողները գրում են հասցէի վրա միայն Արծրունի, առանց ուղե-նալու նեղութիւն կրել ազգանունը և անունը էլ աւելացնել: Խնդրում ենք հեռագիր ուղարկողներին աւելացնել: Խնդրում ենք հեռագիր ուղարկողներին երբ մեզ են հեռագրում, գրել հասցէի վրա կամ Գրիգոր Արծրունի կամ խմբագիր Արծրունի, իսկ պ. Սենեքերին Արծրունուն հեռագրելու ժամա-նակ, գրել կամ Սենեքերին Արծրունի, կամ աղ-իօկատ Արծրունի: Եթէ ոչ շատ անգամ հեռա-գրից, որի վրա գրված է լինում միայն Թիֆլիս Արծրունի, մեզ են բերում և մենք իհարկէ բաց ենք անում, առանց խմանալու թէ որ Արծ-րունու համար է և վերջը յայտնվում է թէ պ. Սենեքերին համար է: Խնդրում ենք մեզ հեռա-գիր ուղարկողներին ուղարկութիւն դարձնել մեր այդ խնդրի վրա:

Լսում ենք որ ժողովրդական խաղե-րի հերոսները մինչ արդէն վախճանվեցաւ, երե-ւելի խաղերի հետեւեցին: Ահա մի նոր ապա-ցոյց որքան օգտաւէտ են մեր մամուլից գոված այդ ժողովրդական խաղերը:

Պ. Տէր-Կառնանց խնդրում է մեզ յայտնել, որ վաղը կիրակի, յուլիսի 11-ին «Երազ» պաշտ-ում, կուկիայում, պարոնը տալու է մի կօն-ց երաժշտական յայտնաբերում, որի վերջը կը լինեն պարեր: Կը խաղան «Նոր բնակարան» պիէսան, ուսանելին և հայերէն լեզուով: Մտաւրը պարոն-ների համար 1 րուբլ է, տիկիների համար 50 կոպեկ:

ՅԵԼԻԵՏՈՒՆ

Կարճեալ Գարիբալդի!!
Ինչ անեմ, ես մեղաւոր չեմ: Նախկին Ֆելի-տտին անտուշ վերջաբանութիւնը զիս հարկադրեց մի քանի տող էլ գրելու Գարիբալդի մասին: Այս անգամով վերջանում է, որովհետեւ, (թէ և տակաւին այրելու կուսակիցների անպակաս չեն) Գարիբալդին աղիօկի միջին դուրս հանեցին, և առանց այրելու, աղիւն, զմտելու և խորովելու չիտակ Հոսմ տարան և ուրիշ մահկանացուաց նման կրակից հեռու, ցուրտ չիլմի մէջ թաղե-ցին պրծան:

Ահաւասիկ Հոսմից եկած հեռագրաւորը:
Յունիս 11 ժամը 4-ին Գարիբալդիի կիսարձա-նի առաջնորդութեամբ յուղարկուող իրանական հա-ղէտ սկսաւ յառաջ գնալ գէպի կապիտուլ բլուրը:
Կորսուն ներկայացնում էր մեծաշուք մի տեսա-բան. ամբողջ խոնկալ էր: Պատուհանները սոյոյ զրօշակներով զարդարուած անթիւ թաղկնական օղին մէջ ծածանում էին, և ամենքը զիստաց:

Գարիբալդիի կիսարձանը պատկող ազատու-թեան մի արձան էր զրուած յաղթական կառքին վրա, որուն լծուած էին վեց սեւեռնակ սպիտակ ձիեր: Կառքի առջեւից տանում էին իտալիոյ քա-ղաքներից եկած զրօշակները:

Յուղարկաւորութիւնը բաղկացած էր անհամար

«Մշակի» ներկայ համարում տպւում ենք դօ-ւոր Անդրէաս Արծրունու թղթակցութիւնը Բե-րլինից, պրոֆէսոր Վերլսովի Անդրկովկասի մասին կարգացած հետաքրքիր դատաւորութեան վերա-բերութեամբ:

Յուլիսի 7-ին Թիֆլիսի մէջ ամենքին ծանօթ ճարտարապետ պ. Բէլոյ, բարձրանալով իր նոր շինվող տան վերին յարկը, երեւի աշխատանք-ները նայելու համար, սնկվեց և ահագին բարձ-րութիւնից ընկաւ: Նրա կիսնքը մեծ վտանգի մէջ է:

Երեւանի «Պատկ» լրագիրը հաղորդում է որ եկող տարվանից մի խումբ երիտասարդների դիտաւ-րութիւն ունի հրատարակել Երեւանում մի ամսագիր «Պատուհան» վերնագրով: Ուսում «ԿԱՅԿԱՅ» լրա-գիրը արտատպելով այդ լուրը հարցնում է ար-դեօք շատ չեն Երեւանի պէս մի քաղաքի համար, որտեղ գրական ոյժեր չը կան, այդքան հրատարա-կութիւններ, երբ արդէն Երեւանում կայ «Պատկ» և «Առողջապահական թերթ»:

Մեզ պատմում են հետեւեալը: «Երբ վարտա-նի այլ և այլ կողմերը լուր տարածվեց թէ Թիֆ-լիսում կուսող փահէլմանները դրամական մեծ վարձատրութիւն են ստանում, այլ և այլ տեղե-րից սկսեցին գալ Թիֆլիս կուսող և փող վաստա-կել ցանկացողները թէ դիւղական և թէ արուես-տաւորների դատակարարից: Թիֆլիս եկած, նրան-ցից մի քանիսն երբեք աշխատում է հանդէս դուրս գալ կուսի մէջ, մի 50 կամ նոյն իսկ 100 րուբլ վարձատրութիւն ստանալ, միւսներին, ի հարկէ այդ էլ չէ աշխատել և նրանք անգործ պատում են քաղաքում: Բայց ինչպէս վարձատրվածները, այն-պէս էլ չը վարձատրվածները մի քանի շաբաթ մնալով քաղաքում, մի յայտնի դատակարարի, քեֆ-անդների չը ջանում, վատում են գինու վրա իրանց վերջին ունեցածը, անբարոյականաւոր են անգործութեանից, այդ ժամանակ իրանց աշխա-տանքն էլ երեսի վրա գցում իրանց ծննդա-վայրում և վերջը վերադառնում են տուն ան-փող, յոգնած, անբարոյականացած, մաշված, դա-տարկաշրջիկ ու անգործ կեանքին ընտելացած և շատերը նոյն իսկ իրանց ամբողջ կեանքի համար խանդարված առողջութեամբ: Ահա այն գովելի արհեստը, որից մեր մամուլը խորհուրդ է տալիս նոր սերունդին օրինակ առնել:

Ընկերութիւններից, որոնք կրում էին փարիզից ուղարկուած դրօշակներ և պատկերներ:
Ժամը 5 1/2-ին շքադիրը մեծեցան կապիտուլին: Ամենախոնկ լաղմութիւն մը բլրին զառվայրը ամբողջ պաշարած և փակած էր: Կառքը չը ջա-պատեալ էր 40 զրօշակներով, որոնց խաղաքանչիւ-րին վրա Գարիբալդիին, Ամերիկայում, Իտալիա-յում, Ֆրանսիայում արած յաղթութեանց անուն-ները գրուած էին: Ըստ խնդրանաց ամբողջին, նուազածուց խումբը Գարիբալդիի ազգային երգ հնչեցուց:

Երբ Գարիբալդիին կիսարձանը քաղաքապե-տին յանձնեցին, բազում անձինք դամբանական ճառեր կարդացին: Աւելորդ է ասել թէ ինչ մեծ ընդունելութիւն գտան այդ ճառերը. ծափա-րութիւններ, աղաղակներ, գոռում գոչումներ, սոցա ամենքը անձաւունք էին:

Գարիբալդիի կիսարձանը դրվեցաւ քաղաքա-պետի պալատին դրսի սանդուղին վրա:

Նիսասայի մէջ Գարիբալդիի ծնված տունը այժմ անհետացած է: Նիսասայի նաւահանգիստը ընդար-ձակելու աշխատութեանց ժամանակ տունը քան-դել էին: Նոյն միջոցին, Դարբոս անունով չա-փազանց հայրենասէր մի իտալացի կտոր կտոր հաւաքել է Գարիբալդիի տան աւերակները և մեծ խնամքով պահել է: Մի անգլիացի այդ աւերակ-ներին ահագին գումար առաջարկելով ցանկացել

Մեր սովետները այնտեղ հասցրին իրանց անբարոյական լողիկա, որ սկսեցին համեմատել ժողովրդական խաղերը ցիբիկի հետ, այն երեւ-լի միտք յայտնելով որ ցիբիկի մարդկանց զբաղ-մունքները աւելի էլ վտանգաւոր են, մի և նոյն ժամանակ մեղադրելով մեզ թէ մենք բէկ-լա մի և բէկնք տպում ցիբիկի համար: Ցիբիկի խաղերը աւելի թէ պակաս վտանգաւոր են,—դա ոչինչ կապ չունի ժողովրդական խաղերի հետ: Ցիբիկի կլտունը, կամ գիմնաստի համար իր վտանգաւոր պարագայումը փնջաւն է և նրանով նա աշխատում է իր դաւն հացը: Բայց ոչ ոքի գլխին չի մտնի խորհուրդ տալ ամ-բողջ աղբին ցիբիկի գիմնաստներից կամ կլա-ուններից օրինակ առնել: Բայց կը տպվեն թէ չեն տպվի ցիբիկի համար բէկաւ մի և բէկ, այդ մի և նոյն է, այդպէս էլ ցիբիկը իր ներկայացում-ները կը տա, քանի որ զրանցով է ապրում: Կրանով ցիբիկային վարձութիւնները չեն ընդհան-րանայ ազգի մէջ: Նոյն իսկ դրա մէջ կը լինէր անբարոյականութիւնը, եթէ մենք խորհուրդ կը տալինք հասարակութեանը օրինակ առնել ցիբի-կի վարձութիւններից, ինչպէս ուրիշները խոր-հուրդ են տալիս օրինակ առնել միմեանց դունչ-ու պոռնիցը ջարդող, միմեանց այլանդակող և նոյն իսկ միմեանց սպանող վայրենի կուսուցե-րից:

Այս օրերն հասաւ Թիֆլիսից դէպի Եւրօպա ուղևորվելու համար Լօնդոնի պարսից դեսպան Միրզա-Մեքում-խանը: Լսում ենք որ նա վարե-լու է այսօրեւեակ եւրօպական երեք պետութիւն-ների մօտ պարսից դեսպանի պաշտօնը: Անգլիայի Ֆրանսիայի և Գերմանիայի:

Քանի մի օր սրանից առաջ մի Թիֆլիսիցի հայ երիտասարդ, Մէլիք-Սարգսեանց, կուր դետի մէջ լողանալու ժամանակ, խեղդվեցաւ ջրի մէջ: Գլխով գտնվեցաւ մի քանի օրից յետոյ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԱՆԻՐԻՍԻ ՌԵՍԱԿՈՒՄԵՆԹԻՒՆԸ

Անկարելի է իրաւացի և նպատակայար-մար չը համարել անգլիական նաւատորմի

է գնել. բայց հայրենապաշտ իտալացին «աւերա-կաց ծանրութեանը չափ ոսկի տաս չեմ տար» ասել և անգլիացուն հիացրել է: Այժմ Դարբոս հայրենասէրը մի ստորագրութիւն բացանկելով տունը իր նախկին ձեռով աւերակի կտորներից կրկին պիտի չինել տայ:

Գարիբալդիի համար Ֆրանսիայի Գիթօն քաղա-քում մի արձան կանգնեցնելու համար փարիզում ստորագրութիւն են բաց արած: մինչ հիմայ հար-կաւոր եղած փողից աւելի հաւաքուած է, ասում է լրագիրը: Նոյնպէս Ալբիից համար մի փողոց պիտի մկրտեն Գարիբալդիի անունով ի պատիւ իր անմահ յիշատակին:

Ահաւասիկ Ալիօտիական Մասօնական ընկերու-թեան հեռագիրը, առ Մէնտտի որդի հանգու-ցեալ Գարիբալդիի: Ֆրանսիայի Բարձրագոյն ժո-ղովը, Ալիօտիական Մասօնական ընկերութեան զգացմանց թարգմանը, յայտնում է իր խորին ցաւակցութիւնը զոր զգացին համայն անդաւը ի-րանց մեծանուն եղբոր Գարիբալդիի մահուան անթիւ, և ընդհանուր սոյոյ մասնակցում է մար-դասիրութեան իրաւանց անվաստակ պաշտպան և ազատութեան առաքեալ հանդիսացող վեհանձն դիւցազնին կորստեան պատճառով: Հրամանա-տար Մասօն ընկ:

գործողութիւնները Ալեքսանդրիայի առաջ, գրում է «ГОЛОСЪ»: Մի օր նրան բաւա-կան եղաւ Ալեքսանդրիայի արտաքին ամ-բողջները լուսնելու և աւերելու համար: Այդ ամբողջներից մէկը արդէն գրուել են «Invincible» շոգենաւի նաւաստիները: Ներքին ամբողջների ոմբակոծութեան հե-տեւանքներն էլ երեւի նոյնը կը լինեն: Ալեք-սանդրիան այսօրեւեակ անգլիացիների ձեռ-քում կարելի է համարել:

Սուէզի ջրանցքը նոյնպէս նրանց ձեռքին է: Առեւտրական նաւերի նաւագնացութիւնը ջրանցքի վրա արգելված է: Այդ արգելքը շատ հասկանալի է: Անգլիական միջամտու-թեան սկզբնական նպատակն էր ազատ դարձնել նաւագնացութիւնը ծովային այն ծանապարհի, վրա որի մուտքը անգլիացիք այժմ փակել են առեւտրական նաւերի հա-մար: Պէտք է ի նկատի առնել, որ ջրանց-քը կարող էր այնպիսի «առեւտրական» նաւ մանել, որի նպատակը կը լինէր ծովը ըն-կղմել ջրանցքի մէջ և փակել ջրանցքը պահպանող անգլիական նաւերի և գրա-հակրի ծանապարհը: Ջրանցքի վրա հա-ղորդակցութեան դադարեցնելը երեւի ժա-մանակաւոր և մինչև անգամ բազմական միջոց է, որովհետեւ հակառակ դէպքում անգլիական կառավարութիւնը ստիպված կը լինէր ահագին գումար վճարել այդ գործից առաջացած վնասները ծածկելու համար:

Բ. Գուռը անյապաղ բողբեց Ալեքսան-դրիայի ոմբակոծութեան դէմ: Նա մինչև անգամ պահանջեց անգլիական կառավա-րութեանից անյապաղ դադարեցնել պատե-րազմական գործողութիւնները: Այդ պա-հանջի պատասխանը առաջուց կարելի է նախատեսել: Լօնդոնից կը հաղորդեն Կ. Պօլիս, որ սուլթանը իր ձեռքին ամենալաւ միջոց ունի անգլիական միջամտութեանը վերջ դնելու համար, բաւական է որ նա

Մի այլ հեռագիր ուղղեալ Գարիբալդիի ընտա-նեաց: Միացեալ դատաւորի աղաւթմիտ խրմ-բերը կաղմող վարչական ժողովը մասնակցում է ընդհանուր սոյոյ և վշտակցութեան, 1870-ին Ֆր-անսիան պաշտպանող աղաւթմեան առաքեալ մեծահռչակ զորապետին ընտանեաց հետ: Բազմա-թիւ ստորագրութիւնը:

73 տարի առաջ Պիոս VII պապը մի յատուկ կոնդակով նղովեց Նապօլէոն I-ը: Պապը բանա-ղրեց Նապօլէոնին, որովհետեւ սա վերջին Դարը Մայնը կայսեր յաջորդի սեպական իրաւունքով Ս. Աթոռին յատկացեալ եկամուտները պապի ձեռքից իւրեց և նորա իշխանութիւնները իրան հպատակացրեց: Պապին թողուց միայն Հոսմի բանայապետական պալատը տարեկան երկու միլիօն թղթով: Պապը առանց հերքել համար-ձակելու կուտուած Նապօլէոնի բոլոր ուրիշ գրա-ւումները, յափշտակութիւնները, կողոպուտները, միմեանց իշխանութիւնները, մարդասպանութիւնները, մինչև անգամ ձայն չը հանեց Ինկիէն դքսի ըս-պանութեան, բայց երբ պապը իր անձնական շահերին վնասը զգաց, այն ժամանակ իսկոյն բա-նադրեց: Այսպէս է եկեղեցւոյ ինքնակամութիւնը:

Ամենքը գիտեն որ Թագաւորադն իշխանների, Թագաւորների և կայսերաց որդիք երբ ծնվելով յայնարհ գալու նեղութիւնը կրեն, իսկոյն որ և

U p n o

անկախ և անհատական մէջ յարաբերութիւններ
անհատական ծանօթեցումով կողմնակի չեղող ընտելեան
հետ, իսկ նոյն ժամանակ, որոնց անհատական ծանօթ
էին այդ նկարագրած տեղերը, յիշողութեան մէջ
կենդանի կերպով յարաբերութեան անցած ժամանակ
նախնական տպագրութիւնները: Բարձրագույն
և Արտաբնական ծանօթագրութիւնը և այլ վերջինից
անցը դեպի Քրիստոսի մէկն էր այս նկարագրի-
ները, իսկ միւսը վերաբերուած էր Նախնականին,
որ դատարանին միջն էր կատարուող ճիշդագոյն
հասկացիկ: «Նին աշխարհը շուրջ մի ալ կէտ, ա-
սեց դատարանը, որ սորա հետ կարողանար հա-
մեմատուիլ իր երկրագնդին չեղողութեան (land-
schaftliche Majestät) կողմից»: Պ. Վիլհելմ Կառն-
ձին ուշադրութիւն դարձրեց կողմնակի ֆիզիկա-
կան և մէտէօրօգիական պայմաններին մասին տե-
ղեկութիւններ հաւաքելուն, և ապա կերպով
թանգաները նիւն էր ցոյց տուց որքան
տարբեր է մեր երկրի մէջ գտնուող տեղերում
ընկնող ջրի (անձրեւի և ձիւնի) քանակութիւնը և
ուրեմն որքան տարբեր է կլիման, որի ծայրահեղ
հակառակութիւնը (contraste) մասնաւոր աչքի է
ընկնում Սուրամի շրջանից երկու կողմը և որի
հետեանքն է չեղող բուսականութիւնն այս լեռներու
դեպի արևմուտքը և մասամբ ամառի և անապատ
տեղերը դեպի արևելքը, որ միայն մի գաւառում
դարձեալ ձիւն բուսականութիւնն և օրգանական
կենսը է ծագումով—այդ է Լինկոլնի մէջ, բայց
զորա հետ կապուած են և շատ վատաբանող օր-
գին պայմաններ: Լինկոլնի կարելի է «մալա-
րիսի» կենտրոն համարել, բայց և Մուրանի դաշ-
տերը, որի նիւստանի ծայրին այժմ անցնում է
Բազու-Ռիֆլիսիան երկաթուղին, վնասարար կեր-
պով աղբուր մէջ այս կողմերի բնակիչները վրա-
«Այս դիմը ամենամեծն էր փորձելուց մինչ և որ
մարդ երբէք արել է մարդու վրա թաղանթաշաւ
է պ. Վիլհելմ և հարց է առաջարկում կարող
կը լինեն արդեօք երկաթուղու ծառայողները
յաղթող ճանդիւնաւ այն պատերազմի մէջ, որ
պէտք է շարունակ տանին Մուրանի դաշտի մա-
լարիայի դէմ:

Կատարուած այն կարծիքն է, որ կողմնակի առեւ-
ելան մասի կլիման, ինչպէս նա այժմ է, մի նոր
երեւոյթ է՝ չորութիւնը, անձրեւի պակասութիւնը
և ուրեմն կլիմայի անսովորութիւնը զգաւորա-
պէս հետեանքն են անտառների հետ բարբարոսա-
կան վարմունքի: Ի՞նչո՞ք է կարելի ընդունել, որ
կողմնակի բոլոր տարիքակիները մի ժամանակ
ամբողջապէս անտառով էին ծածկուած, բայց ան-
կասկած է, օրինակի համար, որ զորա բացակա-
յութիւնը իր ձորի մէջ մարդու ձեռքի ոչնչաց-
նող դրոն է, որին դատարանի կարծիքով կարելի
է դարձան տալ նոր անտառներ բուսեցնելով:
Այդ փորձը շատ հաւանական է, որ կը յաջողվի,
ինչպէս նա յաջողւում է ամեն տեղ, ուր անկել
են ծառեր կաշարանների մօտերում, կը յաջողվի
և այն պատճառով, որ ամեն տեղ կողմնակի
ուր մնացել է անտառը, նա դարձանալի առատ
և ձիւն կերպով է դարձանում:

Կողմնակի գեօգրֆիան էլ դրանց ճանապարհորդի
ուշադրութիւնը և նա կարծիք է յայտնում, որ
երկրի անկի մանրամասն հետազոտութիւնները կա-
պաւորուանեն, թէ ստուգապէս կազմութիւնները
և երեւոյթները (glaciale Erscheinungen) շատ ա-
ռուակ մեծ ընդարձակութիւն են ունեցել կողմն-
ակի մէջ քան թէ սովորաբար ընդունւում է: Նա
նիւնում է այն մեծ տարածութեան վրա, որ ու-
նեն առաջը և ուղղաբաները (Geröll, քրուլլայն)
կողմնակի ձորերի մէջ մասի մէջ և վերաբերում է
դրանց ծագումն հեղեղեան պերիօդի ժամանակ
եղած լայնատարած գլէչերներին:

Բայց ոչ միայն երկիրը իր բնական յատկու-
թիւններով և բազմաբնական առանձնութիւններով
էր, որ չարժեք պ. Վիլհելմի հետաքրքրութիւնը:
Նորա զգաւոր ուշադրութիւնը կարելի է ասել,
ուղղուած էր կողմնակի աղբուրանութեան վրա: Իր-
բն անթրոպոլոգի և ազգային նա իր կարողութեան
չափ հետազոտութեան ենթարկեց կողմնակի աշխ-
տեան ազգերի ներկայացուցիչներին, ուսումնա-
սիրելով նախ և առաջ նրանց ֆիզիկական ցեղա-
կան յատկանիշները: Նա ցուցնում յայտնեց, որ
մասնաւոր լեզուագէտները իրանց պարտաւորու-
թիւնները չը կատարեցին իր ժամանակին, չու-
սումնասիրեցին կառուցելու այն պատճառն ցեղերի
որք այժմ կամ ոչնչացել են կողմնակի մէջ, կամ
երկիրը թողնելով և ցրվելով այլ երկրներում և
փոքր առ փոքր ուրեմն խառնվելով այլ ազգերի
հետ կորցրին իրանց առանձնութիւնները: Այս-
պիսով դուք շատ ազգեր կորան դիտութեան հա-

մար նախ քան յաջողվի նրանց ուսումնասիրել
և որոշել նրանց ցեղական գիշերը մարդկային ըն-
տանիքի մէջ, իսկ ուրիշները այժմ էլ արդէ քա-
լերով սպառնում են և դուք մի քանի տարւոց
յետոյ կորած կը լինի վերջին նշոյլը արեւմտեան
ուրիշների և այլն, որոնց յաճախան պատճառը
ներք և աշխարհագրիները յիշում են ամենաշին ժա-
մանակներից և որոնք անկասկած այս տեղերի
բնակիչներն էին և նախապատմական ժամանակ-
ներում: Նշոյլն ունենալու, մեռնելու վրա են
և Կաղաւթնի մի քանի ազգեր, նոյնպէս անհ-
տանում են Եւրոպայի երկրները և լեզուագէտների պար-
տաւորութիւնը կը լինի շատապէս զբաղվել այդ ազ-
գերով, որ այսպիսով պահպանվի գոնեա նրանց
վիշտակը գիտութեան համար:

«Այս խօսքերս, ընդմիջեց իրան դատարանը,
ի հարկէ վերաբերում են լեռնային աղբուրանի
մի բարձր առաջնային, ասածներս չեն վերաբեր-
ւում երկու պատմական և քաղաքակրթութեան ազգե-
րին—Նայերին և վրացիներին, որոնք միշտ ա-
ռաջնորդող դեր են խաղացել այս երկրներում:
Ամենաշին ժամանակներից սկսած տիրապետել են
երկրին և ընդունելով քրիստոնէութիւնը, այլ ազ-
գերը առաջ շարունակել են բարձրանալ իրանց
ինքնուրոյն կենսի մէջ: Մասնաւոր հայերն են,
որք կազմում են կողմնակի ինտելիգենցիան, և
աւելի և աւելի ընդարձակում են իրանց ազգե-
ցութիւնը, ինչպէս որ Թիֆլիս այժմ իրաւամբ
կարող է համարվել հայոց քաղաք, որովհետեւ
դրա բնակիչները 29% կազմում է հայերից, այն
ինչ վրացիները 25%, թաթարները 15%, իսկ
ուսմանը միայն 7% են ներկայացնում: Հայերը
դեպի առաջ են ձգում քաղաքակրթութեան ծա-
նապարհի վրա. վաղուց արդէ զգալի են ձգում
ները դեպի գիտութիւն և կրթութիւն և նրանք
իրանց համար հիմնեցին ուսումնարաններ, որոնց
մէջ դաստաւրութիւնը կատարվում է նոր մեթո-
դներով, որոնց մէջ կան հարուստ բնագիտական
հաւաքածոներ դաստաւրութեան համար: Հայերը
և վրացիները մշակում են և իրանց լեզուն, ու-
նեն իրանց սեփական գրականութիւն, հրատարա-
կում են պարբերական թերթեր ոչ միայն սե-
փական լեզուով այլ և սեփական տառերով: Այդ
բոլորը ապացուցանում է մի ձգտում դեպի նոր
կենսը և այսպիսով պահանջներ ուղղակի արտա-
յայտվում են. օրինակ հնագիտական կօդերէսի
ժամանակ քանի անգամ յայտնած ցանկութիւնը
կողմնակի մի համալսարան ունենալ: Կառավա-
րութիւնը անկասկած խուլ չի մնայ և կը շատի
համապատասխանել այդ երաւայի պահանջներին:

Կատարուած իր ճառի վերջը ներկայացրեց ըն-
կերթիւն մի շարք լուսանկարներ, և զոցա
կուում պ. Վիլհելմեանի Անիի պատկերները, այդ
դէպքից էլ օգուտ քաղելով կարճատեւ կերպով
յիշեց Անիի հիմնարկութեան և կործանման պատ-
մութիւնը, աւելացնելով մի քանի տեղեկութիւն-
ներ Բազարատեանց տան տիրապետութեան մա-
սին: Նա ցոյց տուց նոյնպէս և աշխարհագրա-
կան քարտէշներ, որք պատրաստվել են կողմն-
ակի գլխաւոր շտաբի ջանքերով, նոյնպէս և պ.
Չաղլիլի ցեղագրական քարտէշը:

Նիւթի կողմից այնքան ձիւն դատարանութիւնը
զբաղեց լուսնի տառնաձիւն ուշադրութիւնը, չը
նայելով, որ նա տեղե ժամ երկու ժամ, և ոգի-
րած ծախհարութիւններ հետեցին դատարանի
վերջին խօսքերին:

Բաղդի բերանը մի քանի օր այդ դատարա-
նութիւնից առաջ եկած էին Բերլին մի քանի հայ
ուսումնական երիտասարդներ և մենք ամենքս
մէկ մէկու rendez-vous տուինք Վիլհելմի դատա-
րանութեան մէջ, այնպէս որ գոնեա մի քանի
վկաներ կայինք այն չափազանց համակրական և
քաջալերիչ խօսքերին, որ հաշակաւոր գիտնականը
նախնայեց մեր ազգին:

Ա. Արքեպի

ՆԱՍՏԱԿ ԹԻԲԻՐՔԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, 27 յունիս 82

Մեր հրապարակախօսներն շատերը այնպէս
համոզուած կերպին թէ ազգային պակասութիւն-
ները պէտք է ամբողջապէս հրապարակ հանել, մեր
գործիչներուն ամեն գեղեցիկները պէտք է խը-
տաւորութեամբ քննարկուել, որպէս զի բնիկեցող հա-
տարակութիւնը վնասութեամբ չի պաշարուել:
Յուսանաւորութիւնն է եղած, կըսեն, ամեն ժամա-
նակ ազգերու վերջնականապէս կործանման պատ-
ճառ: Այս ազգական սկզբունքին է որ կը

տեսնենք շատերն որք մերթ կը ջանան քոչար-
կել ամեն մեղ անհաճելի երեւոյթիւն, մերթ ևս
քաջալերութեան պատրաստաւ կը գովաբանեն
ազգային գործիչներու միջակ անձնաւորութիւն-
ներն և անոնց ամեն մէկ վարմունքն ի լաւն կը
մեկնեն:

Այս լաւատես կամ ներողամիտ դրոյցին պատ-
կանողներն դուք այնքան պատճառ չունենայիք
պակասութեան երթ ազգերին սովորական դրու-
թեան մը մէջ ըլլալը և եթէ ամեն կողմէն կործա-
նում և քաջալուծ չը սպառնային մեզի այս բո-
ւալիս: Մեր խօսքն ի հարկէ թիւրքերունակ հա-
յոցս վիճակին կը վերաբերի: Տափառք և վը-
տանդն ստակալ են, կորուստը մերձաւոր է և ի-
րաց այս վիճակին հասնելուն ոչ նուազ օգնեցին
մեր հրապարակախօսներն ամենք, որք ճշմարտու-
թիւնը չի խօսեցան ամեն ժամանակ, մասով յոյ-
սերով երեւցին դմալ և ճիշդ երկար տարիներ
ստալոյ լուրեր տարածելով վերջապէս կատարեալ
թիւրութեան դատաւարացիլն հայուն նորաճառ
սերունդը: Եթէ ամենք, հետեւելով ոմանց օրի-
նակին, պարզէին մեր վիճակը առանց դար-
ձուալներու, եթէ վստահ և փայլուն մերձակայ
ապագայ մը չի չօղացնէին հասարակութեան ա-
ռաջ, եթէ, վերջապէս, խաղաղան ձեռքերին
հարուածելին անխնայ դաւաճաններն, իմաստա-
կներն և ստալոս լուրատուները և անոնց օձիքն
բռնած դուրս վանելին մեր ծոցէն, ինչպէս կը
վանեն աղաղիլ և վնասակար կենդանիներն, մեք
կը կարծենք որ այս աստիճան մեր ժողովուրդը
անխնայութեան մասնաւոր, այս աստիճան քա-
յալուստ վիճակի մէջ չէր ըլլար:

Ի՞նչ է այսօր թիւրքերունակ հայ կուռած ժո-
ղովուրդին իսկական վիճակը: Նա հարատակ է
մի տերութեան՝ որ եթէ երկրին մէջ բարեկուր-
տութիւն մտցնելու բարի կամքն անգամ ունենայ
նա իր գոյութեան սպառնացող խնդիրներու հա-
ղի կարող է խեղճ հաղուանել այս ժամու: Հա-
զար և մէկ մտահոգութիւնը կը պաշարուն դա-
ն ներքին բարեկուրտութեան կարեւորագոյն ըզ-
բաղմունքներ առաջնաւորութիւն ունին իր աչ-
քին: Արեւմտ առ այժմ ոչինչ պէտք է յուսալ
բարեկուրտման մասին, մինչև որ միջազգային
միտ խնդիրներն պարզին. յետոյ կը տեսնեն: Եւ
դեռ հրապարակախօսներն ունենը որք 61-ը յո-
ղուածն առարկայ բրած կը լինեն, դեպքանայ
կայ ու նիստին կարեւորութիւն կուտան և չեն
տեսնել որ այդ դիտաւոր աստղին գաղաւթը դի-
տած ժամանակին՝ հողը մեր ոտից ներքե կը
փլի:

Մեր կրօնականները առհասարակ ազգաւ և
անձնապաշտ, չեն իմանար թէ ազգային վերա-
կենդանութեան գործին մէջ ի՞նչ դրուար դեր ու-
նեն կատարելու: Իրենց ամեն խօսքերին, ամեն
վարմունքին ակնին կը տեսնուի որ բարեպաշ-
տական եռանդն անգամ մտած է անոնց սրտին
մէջ և այս է պատճառ զվնասարարութեան որ անհոգ
կը մնան երեւցին հրապարակ վայր մը ընկու
ամեն դատարարը հայուն: Նոյնք բոլոր ունին և
չեն քարոզել ժողովրդին իր պարտքերն, իր
իրաւունքները: Այդ անբարեկամութիւնն աստեան
չեն հապուանել ժողովրդին այն ճշմարտութիւն-
ներն որք բրեկան յայտնը կը համարուին եթէ
ուրիշ տեղ արտասանուին: Նոյնք կարող են ազ-
գային բարեպաշտութիւնը վերականգնեցնել գո-
նէ բարի օրինակ հանդիսանալով և չեն ընել
այդ: Նոյնք անտարբեր կը մնան և չեն զինուր
այն օտար դուրսներու դէմ, որք ամեն բանէ ա-
ռաջ ազգայնութեան զգացումը կը ջանան խեղ-
գել հայու սրտին մէջ, որ մեղ համար կրօնադի-
տութիւնն շատ աւելի աղետալ է: Եւ հրապարա-
կախօսներն կան որք «ազգային պատիւ է» ըսե-
լով կը դանդաղին այդ հոգեւորականները խառն
ի կարգ հրաւիրու:

Ազգային վարչութիւնը դարձեալ քանի մը ան-
ձանց ձեռքին մէջ կը մնայ երկար ժամանակ:
Նոյնք գաղաւթողով ամեն ձիւ կը թափեն որ
հետ պահեն Ներսէսը իր աթոռին և առանց
տեսնելու իրենց աղիկարութիւնը կուտան
մեղ համոզել որ մեծ գործեր անհնելու դրաւած
են հայուն բարեկուրտութեան համար, մինչդեռ
ջուրը մէջ ծակ բանալէ զատ ուրիշ դան ըրած
չունին: Ինքնակուրջ պարտնեն եւս են այսօր
ամբողջ ազգին խեղճ սովորեցնելու և հրապարա-
կախօսներն ունին որք չեն ամաչել դաշն գովա-
բանելու և ժողովուրդը կը խաբեն անոնց չափին
և կշիռն մասին:

Ազգային բնիկութիւններն կան այլ և այլ նպա-
տակներով հիմնուած: Նոյնք կամ անկարողներու

ձեռք են և կամ կը հիւծին, չունենալով կենսա-
կան պաշար, դրամ: Արեւն են զայն քննադա-
տող և հասարակութեան առատաձեռնութիւնը
գրգռող: Մի ընկերութեան յայտնի համարձակ
ստակ կը գողցուի. խոհմութիւն կը համարեն
լուի. միւսն հաշիւ չուր ատլ. չեն պահանջեր
ստակամբ այդ հաշիւը և պահանջողներն ալ կը
մեղադրեն: Մի բարեգործութեան համար հուսա-
քուած ստակը իր բանկին մէջ կը գործածէ. մի-
սը հրկիւնալ աղքատներուն փողը կոկորդը կը
անցունէ և տարիներով կը լուեն հրապարակա-
խօսը:

Ժողովուրդը իր բնական ազգամարդ կը դգայ
թէ աշխման մեր ազգային ներկայացուցիչներն
կատարեալապէս անկարող են մեր օգուին նպաս-
տելու. թէ ազգային ժողովը իմաստակ ճառա-
խօսներու կրկէն եղած է և դաւաճաններու օրջ:
Նա կը տեսնէ որ այսքան տարիներ ազգին փո-
ւը փոքրէ զատ ուրիշ բան չէ ըրած այդ ոչնչ-
չութիւններու ժողովածուն, և տակալին պինդ
նստած են տեղեկներն այդ ութը դիւլիսա և քէն-
դիները և չեն քաշուր մէկ կողմ: Ժողովուրդը,
ամեն օրինաւոր միջոց սպառելէ վերջը կերթայ
բռնադատել այդ անձինքը որ երեսն գնան և ա-
ւելի արժանաւորացողներուն թողուն իրենց ա-
թոռները: Այս իրաւացի ցոյցն հրապարակախոս-
ներ կան որք կը պարտաւորեն, կը պաշտպանեն
ազգային երեսփոխանականութիւնը մասնաւոր
ըրած մի քանի անձինքը, և այդ ժողովուրդը
«խաթմուտ ամբոյս» կանուանեն, նորա պահանջ-
քնն ապօրինի կը գտնեն և օտարազգի ոտակա-
նութեան միջամտութեամբ նորա կը սպառնան:

Մեր ազգն ստակալն յետին ծայր յետադէմ
համբալ՝ ոչ իրեն նկատմամբ ներողամտութեան
արժէքը դիտէ և ոչ նուրբ դարձուացներն,
մեղմ ճննադատութիւններէ օրուտ քաղել կարող
է: Մեր ազգին գործիչներուն մէջ այնքան չնա-
կան լրբեր կան որք մարդավար աղբարարու-
թիւններն վրանին չեն տանին բնաւ: Հրապարա-
կօսը պէտք է անաչառ, անօղոր ըլլայ աղիւսի-
ներու դէմ. դրդին բազուկէն բռնէ և մատնիչը
խայտառակէ: Արեւ ընթացքով նա չէ կարող փո-
քըր ինչ անգամ աղիւս մերիւններուն վրա եթէ
յիւրաք նորա դիտաւորութիւնը օգտակար գործ
մը տեսնել է և ոչ թէ վեկիկարանութիւններով
ժամանակ վատել:

Մ. Վ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ալեքսանդրիայից տաղված տեղեկութիւն-
ները վկայում են որ Նիկիտատում տիրում է կա-
տարեալ ֆանատիկոսութիւնը: Լուրերը ստուգում
են Լուրիցայի երկրի դէմ, գործված բարբարոսու-
թիւնների մանրամասները: Ստուգում է և այն
որ եգիպտական զօրքը, սովորական և ժանդարմ-
ները մասնակցում էին Լուրիցայի ներսերում
մարտի կոտորելուն: Պօլիցիականները արձա-
նակներ էին արձակում փախչող և անպաշտպան
Լուրիցայի երկրի դէմ, կամ վարվում էին հետեւալ
ներդաւոր կերպով: Պօլիցիականները և ժանդարմ-
կան ամբոյսից փախչող Լուրիցայի ներսերում ապստան-
վել ոտակաւաւորութեամբ, բայց երբ Լուրիցայի
սպառնաւում էին այդտեղ, այն ժամանակ պօ-
լիցիան և ժանդարմները փակում էին նրանց ու-
տակաւաւոր անեականներում, հերթով իւրաքան-
չիւրին առանձնապէս մտրվում էին, իսկ զիւրիշ-
ըր պատուհաններից ծուլ էին նետում: Այդ քա-
ջադրութիւնների համար սուլմանը բազմաթիւ
չքանչաններ ուղարկեց Նիկիտատի պաշտօնեանե-
րին և Արաբի-փաշային: Այդ վերջինը պարծնում
է դրանով որ հենց որ Լուրիցայի զօրքերը սփ
կիջեն Նիկիտատի մէջ, նա անմիջապէս դիւս-
միտով կը քանդի տաւան և իններորդ դարի ամե-
նահաշալի ստեղծագործութիւնը, Սուէզի ջրանց-
քը: Ահա ինչ կը նշանակի մասնաւորապէս երկրի
ինքնավարութիւն տալ: Ինչպէս երևում է մասնա-
ւորապէս Լուրիցայի երկրի չէ կարող հաշիւել քաղա-
քակրթութեան հետ և միշտ կը մնայ թիւմար
լուսաւորութեան, միշտ կը մնայ մոլորանդ:

—Ժոն Լեմուան «Journal des Debats» լրագ-
րում կատարում է յայտնում թիւրքաց միջամտու-
թեան վերաբերութեամբ եգիպտական գործերում:
«Վիտար է երեսփայլ, ասում է նա»—որ սուլ-
թանը, հետեւապէս խալիֆը, ուղղափառների հա-
մայրը հանդէս դուրս դար մի այնպիսի չարժ-
ման դէմ, որ պարզ կերպով, նպատակ ունի աը-
տրել Լուրիցայի երկրի և քրիստոնեաներին մա-

մեծական երկրից: խալիֆայի համար, որը ստիպ-
ված կը լինի երթուղական կամիստների հսկողու-
թեամբ զօրքեր ուղարկել չունեցողներին: Կը նշանա-
կէ իր գահը և խալիֆայութիւնը վտանգի են-
թարկել:

—Լրագիրներին Ալեքսանդրիայից հեռագրում
են յուլիսի 8-ին, որ քաղաքից դուրս են եկել
76,000 երթուղայիններ, 19,000 սիրական քրիս-
տոնեաներ, 4,500 տեղական հրէաներ և 15,000
մահմադականներ:

—Լրագիրներին հեռագրում են Լոնդոնից, յու-
նիսի 30-ին հետևաբար: Համայնքների ժողովում
Գաղտնի յայտարարութիւն է, որ ինքն ոչինչ իրաւունք
չունի քննադատել Ֆրանսիայի շարժառիթները,
որը, ինչպէս և Անգլիան, գործում է կատարելա-
պէս իր իրաւունքների սահմանի մէջ. սխալ
կը լինէր ենթադրել, տեսնելով երկու պետու-
թիւնների գործողութեանց զանազանութիւնը,
որ թշնամական բնաւորութիւն կայ երկու
պետութիւնների մէջ: Եւրոպական համաձայնու-
թիւնը չարժանակում է. Ալեքսանդրեան սպա-
նութիւնները անհետախուզելի և անպատիժ մնա-
ցին: Արաբները սպառնում էին ոչ միայն անգ-
լիացիների կենսութիւն և կապիւն, այլ և ընդհանրա-
պէս եւրոպացիներին: Կառավարութեան արեւե-
լեան քաղաքականութիւնը ետական նպատակներ
չունի: Ռաբակոմութիւնը թշնամական արտայայ-
տութիւն է ոչ թէ երկրպագի ժողովրդի դէմ,
այլ նրան ճշմարտի դէմ:

—«Բէյութի ընկերութեանը» Ալեքսանդրիայից
հեռագրում են յուլիսի 1-ին: Զինադադարման
դրոշակը միայն նրա համար է բարձրացրած, որ
միջոցառելի զօրքերին դուրս գալ քաղաքից: Զօր-
քի մէջ կատարեալ անկարգութիւն է տիրում:
Գլխավորները երկրի ներսն են փակում: Ալեք-
սանդրիայում մեծ հրդեհ է: Ազատված տաճարա-
կիրները հրդեհեցին քաղաքը շատ տեղերում. տար-
սափելի զոհանութիւններ են կատարվում: Եւրո-
պական թաղը կատարելապէս կողոպտված է:
Հարիւր եւրոպացիներ, որոնք թաղված էին օտո-
մանեան բանկում, յուսահատ անձնապաշտպանու-
թիւնից յետոյ սպանվեցան. շատերը ավին մո-
տեցան և մակրիկների մէջ նստեցին: Յայտնի չէ,
թէ որտեղ է խեղդիլը:

—«Standard» լրագրին հեռագրում են Ալեք-
սանդրիայից, որ մի չեղնագործի կամենում էր ըս-
պանել երկրպագի խեղդիլին, բայց բռնակցաւ ա-
ւարճանակ արձակելու րօպէին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բաղդի փոփոխութիւնները: Լոնդոնի
«Telegraph» լրագիրը հաղորդում է, որ այս օ-
րերս վերստին կաթոսածախից մեծաւ «Սկալի-
գերներից վերջինը», որը ապրում էր այդ քաղա-
քում սաստիկ աղքատութեան մէջ մէկ կանաչա-
վաճառի խանութի վերեւ: Զուգակցել Մաստինո,
մարկիզ և կոմս դէլլա Սկալլա, թէպէտ և ուղղա-
կի սերունդն էր կանգնադէմ դէլլա Սկալլայի, վե-
րծախի պոզիտի, որի պալատում ապրում էր
աքսորված Գանտե, և որին նա նուիրեց իր ան-
մահ գրուածքը,—բայց շատ տարիներ թշուառ
կերպով ապրում էր կոշիկների կարկատանքով: Այդ
հին տոմարի վերջիններկայացուցիչը, որ հարիւր տարի
առաջ, թագաւորում էր վերստին և մեծ գորու-
թիւն ունէր հիւսիսային իտալիայում, թշուառ կոշ-
կաւարը, մեծաւ նոյն քաղաքի մի խրճիթում, որը
նրա նախնիքը իր ժամանակ զարգացրած էին պա-
լատներով և արձաններով: Զուգակցել Մաստինո
վերջին ներկայացուցիչն էր Սկալիգերների ընտա-
նիքի, և նրա մահը ընդ միշտ վերջացնում է այդ
փառաւոր ցեղի պատմութիւնը: Ի դէպ է յիշել,
որ Մեդիչիների հին ցեղի ներկայացուցիչը այսօր
երկաթէ և պղնձեայ ձեռագործերի Ֆլորենտի-
նեան մի գործարանատէր է:

Սոփամահները Լոնդոնում: Պարլամեն-
տին ներկայացրած տեղեկութիւններին համեմատ,
անցեալ տարվայ ընթացքում, Լոնդոնում սովից
82 մարդիկ մեռան:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յուլիսի: «Земство»,
լրագիրը յայտնում է իր կամաւոր դադա-
րում:

ՓԱՐԻԶ, 8 յուլիսի: Պատգամաւորների
ժողովը հաստատեց 7,800,000 ֆրանկ կրե-
դիտ երկրպագի արշաւանքի համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յուլիսի: Պետական
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի ար-
ժէ 93 ռ. 87 կ., երկրորդ 90 ռ. 62 կ.,
երրորդ 90 ռ. 75 1/2 կ., չորրորդ 90 ռ. 37 1/2
կ., հինգերորդ 90 ռ. 12 1/2 կ., ներքին
5% առաջին փոխառութեան տոմսակը
արժէ 210 ռ. 75 կ., երկրորդ 222 ռ.
55 կ., արեւելեան առաջին փոխառութեան
տոմսակը արժէ 89 ռ. 37 1/2 կ., երկրորդ
89 ռ. 50 կ., երրորդ 89 ռ. 50 կ., ոսկի
8 ռ. 18 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա
արժէ 22,25 պէս, ռուսաց 100 ռ.
Համբուրգի վրա արժէ 207 մարկ 55 պֆ.,
Փարիզի վրա 255 ֆրանկ 50 սանտիմ:
Բօրսայի արամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՐԱԿՆԵՐ ԿՈՏՈՐԵԼՈՒ
Դ Ե Դ Ը
24 հատը արժէ 90 կօպ.
ԵՓ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ
Դ Ե Պ Օ Յ Ո Ւ Մ:
4—10 (2. 2.)

Մի հայ ՊԱՐՏԻՋԱՆ (Բաղմանչի)
Աւետիս ԱՐԱՄԵԱՆՑ Վասպուրականի ՎԱՆ
քաղաքից
Կուզեմար պարտիզայանի տեղ գտնել Թիֆ-
լիսում
Բնակվում է ՍԱՂԻ վրա Դիմիտրի Զի-
փրանի տանը, № 58.

САДОВНИКЪ

Армянинъ, Аветисъ Арамянцъ изъ
ВАНА (Турецкой Арменіи).
Желаеъ имѣть мѣсто садовника
въ Тифлисѣ.
Спросить на Пескахъ домѣ Дими-
рія Чигвиани № 58
5—5

ՎՐԱՍՏԱՆԻ Ե ԽՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱ-
կային ԿՈՆՍՏԱՆՈՒՍԻ մէջ նշանակված է
ԱՃՈՒՐԻ 2-ին և կրկնաձուրդ 5-ին առաջի-
կայ ՕԿՈՍՏՈՍԻ կապալաւ տալոյ համար
հետեւեալ Էմիւրաճնապատկան կալուածները:
Ա., երեք կրպակ Բաղազխանայում: Բ., ե-
րեք կրպակ Նորաշէնի եկեղեցւոյ մօտ: Գ.,
երկու և կէս կրպակ Գուրջիխանայում: Դ.,
մի կրպակ փռան թաղում: Ե., մի կրպակ
Միջին փողոցում: Զ., մի երկյարկեայ տուն
Մօղնոյ թաղում: Է., միայնակ տուն փռան
թաղում: Ը., միայնակ տուն Կաթօլիկաց
եկեղեցւոյ մօտ: Թ., եռայարկ կալուած
Ղաշաի խաչի: Ռուսի ցանկացողք կարող
են նշանակեալ ժամանակին ներկայ գտա-
նել:

2—3

Մի հայ ԵՐԻՏԱՍԱՐԳ որ մի քանի տարի
առաջ երկար ժամանակ ծառայել է «Մշա-
կի» խմբագրութեան մէջ, որպէս ցրվող,
ՅԱՆԿԱՆՈՒՄ է ունենալ մի որ և է ծառայու-
թիւն: Զանկացողները կարող են իրանց
հասցէն թողնել խմբագրութեան մէջ:
5—5

Պատիւ ունիմ յայտնել պատվելի հասա-
րակութեանը որ Սօլալից տեղափոխվել
եմ Գորվիսկի պրոսպեկտի վրա Տրիգուլ-
վի տունը և ամեն 4-ից բացել եմ իմ կօն-
գիտերի և հացեղների մագաղինս «Вар-
шавская пекарня» անունով, որտեղ
ծախում եմ կօնֆէկաներ, պիւրօնի, պէշե-
նի, մուրաբա, սուխարի, կուլիչ տօրտ,
բուլկի, զանազան տեսակ հացեղէններ, և
տաք պիւրօնէք, շատ ձեռնուռ գներով իսկ
գաւառացի վաճառականներին մեծ գիշու-
մով. նմանապէս ընդունում եմ ամենայն
տեսակ կօնֆէտեղէնի և հացեղէնի պատ-
էները աւելի արժան քան ուրիշները, այն-
տեղ ևս կարող են դիմել սօլիտերով հի-
ւանդներ դեղ ընդունելու համար թէ ան-
ձամբ և թէ գրաւոր:

ՄԱՐՏԻՐՈՍ ՀԱՄԵԱՋԱՐԵԱՆՑ

2—10

ԻՐԱԻԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵ-
ՆԵԱԿ, Գօլօլիսկի պրոսպեկտի վրա,
տուն ճարտարապետ Բէյօի: Գրասենեակը
բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3
ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—
10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրե-
րից և մեծ տօներէից:

Ներսիսեան դպրանոցի բարձր դասա-
տան աշակերաններից մինը կամենում է պա-
տրաստել աշակերտներ և աշա-
կերտող հիներ՝ բոլոր Հայ դպրոցների
ստորին և միջին դաստանց համար: Զան-
կացողք թող դիմեն Ծովիանօփի կարվան-
սարայում պ. Գրիգոր Կակեանի խանութը
№ 1.

Միջին փողոց, Կաթօլիկէսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԵՆԵՍԻ ՄԵՐԵԼ ամե-
նայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱՐՆԵՐ 8—30 ռ., չա-
մադաններ 250—25 ռ., սակփոշածներ 1. 30—12 ռ., սոսնդոսկներ և ձա-
նապարհի 6—35 ռ., մարաններ (погребцы) 6—25 ռ., սա մօ վարներ 60
կ.—1.25 ֆունտը, կուլիսների պղնձէ ամաններ, Գերմանիայի երկաթէ Էմալով
ամաններ, ու մի վալիսի կներ մրա մօրնի 38 ռ.—75 ռ., հրացաններ
երկու լուանի 6—32 ռ., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30
ռ., պատրոններ (գուլաններ) ընկօլվէրի, սիգար Ռէնգարդի ֆարբիկից, պապի-
րոս և թամբաբուր Կուլիսարօփի գիլիկ պապիրօփի. 5,000 ֆունտ թէժ (չայ) եղ.
ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկիլտ. (սուխար չայու և կաֆէի) Էմալով. կօֆէ Էմալով և
Միլիսկովի. Պետերբուրգում 40—1 ռ. 25 կ. հայիկներ ամենայն տեսակ
28 կ.—240 ռ., պրորկայ գինեվաճառների, հանգային և գարեջրի (доя
зельтерскихъ водъ и пива) զուլթուկ (пучкѣ), պոլիտներ սամովարի և
չայու, զանազ չանդալ զանազան ֆարբիկների 1 ռ. 20 կ.—25 ռ. դոմփեր.
գրչակիթներ 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ռ., դա-
նակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուլիսներ 1—40 միւս: 3—20 կ. պրիբօր.
միս կարելու մաշինայ. Անգլիական ու թոններ, Բրիտանիայի չայիկներ, կաֆէի
նիլիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտր—Չուր մաքրելու,
կրամալ կարօրէն 18 կ., վաքս Զրանսիայի ծակոյ, թուղթ փողաի, կանկերու-
ներ, սուրճուշ, մաւիտ, գրիչ երկաթէ, գրչակիթ, քարտասխտակ, թանաք,
թանաքամաններ, պրեսպապիկներ, գոլաներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշափի
և բրիտանիկի դոմփեր 1—50 կ. միւս: 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չու-
միլէք 45 կ.—5 ռ., շամաղաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. Չուխտ, պոլ-
սապոլաններ վարշափու, Ռեզինի ԿԱԼՕՆԵՐ, ամեն տեսակ, գուլթաններ կա-
նանց և մարդկեանց 15 կ.—50 կ. Չուխտ, շապիկներ, մարդկեանց գալուս-
տիկներ, գոտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեկի և շաքի. սանդրեր շի-
մայու ոսկորե, գուտապերլովի և փայտե, շոտկաներ դիւի, շոքի, սապոլի, պոլի և
կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօֆի և շալէ (парусъ) ֆէլ-
չատէք մարդկեանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ
և մանր գոլանտերիկի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ.,
կոոր, հոտապէտ ջրեր, պուրա, Գլիցերին ջրի քաղաի, հոտապէտ պարաշոկներ
ԿԻԼԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և գիշումով վերդիլեալ ապ-
րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԵՐ
ՍԵԱՆՑԻ պահեստում. (ВЪ Складѣ) միջին փողոցում կաթօլիկաց փողոցի ան-
կիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. Тифлисѣ Ми-
хаилу Н. Теръ-Никогосову.

89—180

Միջին փողոց, Կաթօլիկէսկայա փողոցի անկիւն № 13.